



Գագիկ ԲԱՂԱԴՅԱՆ

ՀՊՏՀ ասպիրանտ

Գերազանցությամբ ավարտել է ՀՊՏՀ բակալավրիատը («Հակա-ճգնաժամային կառավարում»), ապա մագիստրատուրան («Գործարար վարչարարություն»): Այժմ ՀՊՏՀ կառավարման ամբիոնի ասպիրանտ է: Ուսմանը զուգահեռ, եղել է «Ամբերդ» հեղինակական կենտրոնի հեղինակական խմբի անդամ: Ներկայում «Փարվանյան Քոնսալթինգ» խորհրդակցական ընկերության ֆինանսական տնօրենն է, ինչպես նաև, որպես փորձագետ աշխատում է ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության ֆինանսատնտեսագիտական վարչությունում: Հեղինակ և համահեղինակ է 12 գիտական հոդվածների:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ

ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

DOI: 10.52174/2579-2989_2021_4_14

Հիմնաբառեր. դեբիտորական պարտավորություն, կրեդիտորական պարտավորություն, շրջանառու կապիտալ, ձեռնարկարկություն

Բիզնեսում շրջանառու կապիտալի արդյունավետ կառավարման անհրաժեշտությունը վաղուց ապացուցված է: Այն սկսվում է դրամական միջոցների կառավարումից, որը մեծապես կախված է դեբիտորական և կրեդիտորական պարտավորությունների մնացորդներից, շարժերից, շարժընթացից և կառուցվածքից: ՀՀ կազմակերպությունները բացառություն չեն, և մշտապես պահանջ կա գնահատելու, թե որքանով է արդյունավետ այդ երկու բաղադրիչի կառավարման համակարգը հայաստանյան շուկայում, և թե որոնք են այդ համակարգի հիմնական առանձնահատկությունները: Այս խնդրի լուծման համար հողվածում իրականացվել է ՀՀ-ում գործող խոշոր և միջին ոչ ֆինանսական առևտրային կազմակերպությունների դեբիտորական և կրեդիտորական պարտավորությունների վերլուծություն, որի միջոցով ներկայացվել են ոլորտի՝ թեմային վերաբերող հիմնական առանձնահատկություններն ու ձևավորված իրավիճակը:

Կազմակերպության գործունեության ընդհանուր արդյունավետությունը և ֆինանսատնտեսական վերջնական արդյունքներն անմիջականորեն և ուղղակիորեն գտնվում են արտաքին միջավայրի այնպիսի գործոնների ուղղակի ազդեցության ներքո, ինչպիսիք են մատակարարները, սպառողները, աշխատանքի շուկան և այլն¹: Արտաքին միջավայրի գործոնների ազդեցությունը ենթադրում է դրանց առանձին բաղադրիչների և կազմակերպության միջև փոխհարաբերությունների առկայություն: Այդ փոխհարաբերու-

¹ Սուվարյան Յու. Մ. և ուրիշներ, Մենեջմենթ, եր., 2016, էջ 76-77:


թյունները չեն կարող գոյություն ունենալ առանց ֆինանսական կողմի, ինչն առավել ակնհայտ է մատակարարների և սպառողների միջև հաստատված հարաբերությունների դեպքում, երբ երկուստեք անպայմանորեն ձևավորվում են ֆինանսական պարտավորություններ, որոնք էլ հենց կազմակերպության դեբիտորական և կրեդիտորական պարտավորություններն են:

Ժամանակակից բիզնեսն ինչպես դեբիտորական, այնպես էլ կրեդիտորական պարտավորությունների մնացորդները և շարժերը կառավարելու լրջագույն խնդիր ունի, որի լուծումն էապես կբարելավի կազմակերպությունների իրացվելիությունը:

ՀՀ-ում գործող առևտրային կազմակերպությունների կողմից դեբիտորական և կրեդիտորական պարտավորությունների կառավարման ընդհանուր առանձնահատկությունները հասկանալու համար դիտարկել ենք ՀՀ վիճակագրական կոմիտեի մշտադիտարկման դաշտում ընդգրկված խոշոր և միջին ոչ ֆինանսական առևտրային կազմակերպություններից հավաքագրված որոշ հաշվետվական տվյալներ²:

Առաջինն անդրադառնանք կրեդիտորական պարտավորությունների մնացորդներին, կառուցվածքին և շարժընթացին (գծապատկեր 1):

2021 թվականի մարտի վերջի դրությամբ ՀՀ-ում գործող խոշոր և միջին ոչ ֆինանսական առևտրային կազմակերպությունների կրեդիտորական պարտավորությունների հանրագումարային մնացորդը կազմել է 3,720.7 մլրդ ՀՀ դրամ: Այս ցուցանիշը 2019 թվականի հունիսից մինչև 2021 թվականի մարտն ընկած ժամանակահատվածում գրեթե յուրաքանչյուր եռամսյակ գրանցել է աճ: Միակ դեպքը, երբ արձանագրվել է էական անկում, վերաբերում է 2020 թվականի 2-րդ եռամսյակին, և դա պայմանավորված էր COVID-19 համավարակով, որի ազդեցությամբ «կանգ էր առել» ամբողջ տնտեսության շրջանառությունը: Նշենք, որ այդ անկման հետևանքով գրանցվել է դիտարկվող ժամանակահատվածի ամենացածր ցուցանիշը, ինչը, սակայն, «չի խանգարել» արդեն իսկ 2020 թվականի տարեվերջին ունենալ դիտարկվող ժամանակահատվածի կրեդիտորական պարտավորությունների ամենա-



ԳԾԱՊԱՏԿԵՐ 1

Կազմակերպությունների կրեդիտորական պարտավորությունների մնացորդն ու կառուցվածքը (մլն դրամ)

² Տվյալների աղբյուր՝ ՀՀ ՎԿ կայքէջ, Կազմակերպությունների հաշվարկների վիճակը 2019 թվականի հունիսի վերջին՝ https://armstat.am/file/article/sv_08_19a_127.pdf, Կազմակերպությունների հաշվարկների վիճակը 2019 թվականի սեպտեմբերի վերջին՝ https://armstat.am/file/article/sv_11_19a_127.pdf, Կազմակերպությունների հաշվարկների վիճակը 2019 թվականի դեկտեմբերի վերջին՝ https://armstat.am/file/article/sv_02_20a_127.pdf, Կազմակերպությունների հաշվարկների վիճակը 2020 թվականի մարտի վերջին՝ https://armstat.am/file/article/sv_05_20a_127.pdf, Կազմակերպությունների հաշվարկների վիճակը 2020 թվականի հունիսի վերջին՝ https://armstat.am/file/article/sv_08_20a_127.pdf, Կազմակերպությունների հաշվարկների վիճակը 2020 թվականի սեպտեմբերի վերջին՝ https://armstat.am/file/article/sv_11_20a_127.pdf, Կազմակերպությունների հաշվարկների վիճակը 2020 թվականի դեկտեմբերի վերջին՝ https://armstat.am/file/article/sv_06_21a_127.pdf, Կազմակերպությունների հաշվարկների վիճակը 2021 թվականի մարտի վերջին՝ https://armstat.am/file/article/sv_05_21a_127.pdf

բարձր մնացորդը՝ 3,826.4 մլրդ դրամի չափով: Նմանատիպ աճը տնտեսության հետարձագանքն էր համավարակին:




Եթե իրականացնենք շարքի մաքրում (վերոնշյալ երևույթներով պայմանավորված), ապա կտեսնենք, որ կազմակերպությունների կրեդիտորական պարտավորությունների համախառն մնացորդը ցուցաբերում է կայուն և դանդաղ աճի միտումներ, ինչը, ընդհանուր առմամբ, դրական երևույթ է, քանի որ այս դեպքում կա կանխավարկած, որ տնտեսության իրական հատվածն աճում է:

Այսպիսով, ընդհանուր կամ հաստատելու համար պետք է կատարել նաև կրեդիտորական պարտավորությունների կառուցվածքի վերլուծություն: Վերջինս դիտարկվող 7 եռամսյակի ընթացքում գրեթե չի ենթարկվել փոփոխությունների:

Կրեդիտորական պարտավորությունների մեծ մասը բանկային վարկերն ու փոխառություններն են, ընդ որում, այս հոդ-


վածով պարտավորությունների տեսակարար կշիռն ընդհանուր պարտավորություններում 2020 թվականի մարտի վերջին կազմել է 73%, իսկ դիտարկված 8 կետային պահերին այդ ցուցանիշը տատանվել է 72-75%-ի միջակայքում: Ակնհայտ է, որ ընդհանուր պարտավորությունների ծավալների փոփոխությունների պարագայում բանկային վարկերի և փոխառությունների մասով պարտավորությունները փոփոխվել են համամասնորեն, ինչը վկայում է խոշոր ու միջին ձեռնարկությունների համակարգում կրեդիտորական պարտավորությունների կառավարման տեսանկյունից, ընդհանուր առմամբ, որոշակի հավասարակշռության մասին, քանի որ այս իրավիճակն է նաև մյուս հոդվածների դեպքում:

Կրեդիտորական պարտավորություններում ամենամեծ տեսակարար կշիռ ունեցող հաջորդ հոդվածը գնումների գծով պարտքերն են, որոնց բաժինը դիտարկվող ժամանակահատվածում ընդհանուր



ԳԾԱՊԱՏԿԵՐ 2

Կազմակերպությունների կրեդիտորական պարտավորությունների երեք ամենախոշոր հոդվածների շարժընթացը



ԳԾԱՊԱՏԿԵՐ 3

Կազմակերպությունների դեբիտորական պարտավորությունների մնացորդն ու կառուցվածքը (մլն դրամ)

պարտավորություններում տատանվել է 12-13%-ի միջակայքում: Սրանից զատ, հիշատակման արժանի մյուս հոդվածը ստացված ընթացիկ կանխավճարներն են, որոնց դեպքում վերոնշյալ ցուցանիշը տատանվել է 5-7%-ի միջակայքում: Հարկ է նշել, որ արդեն իսկ քննարկված տնտեսության իրական հատվածի հնարավոր կայուն աճը բնութագրող ցուցանիշները հենց վերոնշյալ երկու հոդվածներն են, որոնք իրապես դրսևորում են կայուն աճի միտումներ:

Վերը քննարկված երեք հոդվածների փոփոխման շարժընթացն ու միտումները ներկայացված են գծապատկեր 2-ում (նույնիսկ համավարակի ընթացքում առաջացած ակնհայտ շեղումները չեն անդրադարձել այս ցուցանիշների միտումների վրա):


Այժմ քննարկենք դեբիտորական պարտքերը: Դեբիտորական պարտավորությունների մնացորդները, կառուցվածքն ու շարժընթացը ներկայացված են գծապատկեր 3-ում:

2020 թվականի մարտի վերջի դրությամբ քննարկվող կազմակերպությունների դեբիտորական պարտավորությունների մնացորդը կազմել է 890.0 մլրդ դրամ, ինչը 2020 թվականի տարեվերջի համեմատ աճել է շուրջ 7.3%-ով: Հետաքրքրականն այն է, որ այս ցուցանիշը դիտարկված 7 եռամսյակների ընթացքում դրսևորել է բավական ակնհայտ պարբերաշրջանային զար-

գացում, մասնավորապես՝ դիտարկվող 8 կետային պահերին ցուցանիշի յուրաքանչյուր աճին հաջորդել է անկում, և հակառակը՝ յուրաքանչյուր անկմանը՝ աճ: Փաստորեն, դեբիտորական պարտավորությունների մեկ շրջափուլն ընտրանքի կազմակերպություններում տևում է 6 ամիս, այնինչ այդ պարբերաշրջանայնությունն (ցիկլայնություն) առկա չէ կրեդիտորական պարտավորությունների դեպքում: Սա, բնականաբար, հայտանիշ է, որ այս կազմակերպություններում կարող են լինել իրացվելիության խնդիրներ հատկապես այն եռամսյակների վերջին, երբ տեղի է ունենում դեբիտորական պարտավորությունների մնացորդների աճ:

Դիտարկենք նաև դեբիտորական պարտավորությունների կառուցվածքը: Ի տարբերություն կրեդիտորականի, դեբիտորական պարտավորությունների կառուցվածքում առկա է համամասնությունների փոփոխման ակնհայտ միտում: Մասնավորապես՝ վաճառքների գծով դեբիտորական պարտավորությունների տեսակարար կշիռն անընդհատ աճում է (2019 թվականի հունիսի 53%-ի համեմատ՝ 2020 թվականի մարտին՝ 65%), իսկ, օրինակ, քյուջեի գծով դեբիտորական պարտքերի տեսակարար կշիռը՝ շարունակաբար նվազում, որին նպաստող հանգամանք է ԱԱՀ դեբետային մնացորդների վերադարձման հարկային քաղաքականությունը:

Հետևաբար՝ կարող ենք արձանագրել,



ԳԾԱՊԱՏՈՒՄ 4



Կազմակերպությունների դեբիտորական պարտավորությունների երկու ամենախոշոր հոդվածների շարժընթացը


որ հայաստանյան կազմակերպություններում դեբիտորական պարտավորությունների կառավարման համակարգն աչքի չի ընկնում բարձր կայունությամբ: Այս հանգամանքը պայմանավորված է ինչպես կազմակերպությունների կառավարման համակարգերի առանձնահատկություններով (որպես ներքին միջավայրի գործոն), այնպես էլ արտաքին միջավայրի գործոնների ազդեցությամբ (օրինակ՝ պետական կառավարման մարմինների քաղաքականություն):

Առանձնակի անդրադառնանք նաև դեբիտորական պարտավորություններին առնչվող երկու ամենախոշոր հոդվածներին, որոնք են՝ վաճառքների գծով դեբիտորական պարտավորությունները և տրված ընթացիկ կանխավճարները (գծապատկեր 4):

Դիտարկվող ժամանակահատվածում վաճառքների գծով դեբիտորական պարտավորությունների մնացորդները փոփոխվել են բավական կայուն կերպով: Ի տարբերություն ընդհանուր դեբիտորական պարտավորությունների, նշյալ ցուցանիշը չի դրսևորել պարբերաշրջանային զարգացում, ինչով էլ պայմանավորված է այս հոդվածի տեսակարար կշռի շարունակական բարձրացումը: Վաճառքների գծով դեբի-

տորական պարտավորություններն ունեն ակնհայտ աճի միտում (գծապատկեր 4), ինչի նկատմամբ փաստացի ցուցանիշների շեղումները ձգտում են նվազագույնի, քանի որ R^2 ցուցանիշը շուրջ 0.85 է: Նույն իրավիճակը չէ տրված ընթացիկ կանխավճարների դեպքում. դիտարկվող ժամանակահատվածում տրված ընթացիկ կանխավճարները դրևորել են պարբերաշրջանային զարգացում, որը համահունչ է ընդհանուր դեբիտորական պարտավորությունների փոփոխման շարժընթացին: Բնականաբար, այդ պարբերաշրջանային զարգացումը հանգեցրել է ձևավորված միտումից փաստացի ցուցանիշների շեղման բարձր մեծության, սակայն պետք է արձանագրել, որ, ընդհանուր առմամբ, այս ցուցանիշի փոփոխման միտումը նույնպես դրական թեքությամբ կոր է:

Խոսելով դեբիտորական և կրեդիտորական պարտավորությունների մնացորդների, դրանց կառուցվածքի և շարժընթացի մասին՝ հարկ է անդրադառնալ նաև հայաստանյան կազմակերպությունների կողմից անավարտ առևտրի կառավարմանը: Կազմակերպության անավարտ առևտրի կառավարման վերլուծությունը ենթադրում է գնումների գծով կրեդիտորական, վաճառքների գծով դեբիտորական պարտա-



ԳԾԱՊԱՏԿԵՐ 5



ՀՀ-ում գործող կազմակերպությունների անավարտ առևտրի մնացորդներն ու շարժընթացը (մլն դրամ)

վորությունների, տրված և ստացված ընթացիկ կանխավճարների համակարգային վերլուծություն: ՀՀ-ում գործող խոշոր ու միջին ոչ ֆինանսական առևտրային կազմակերպությունների անավարտ առևտրի մնացորդները ներկայացված են գծապատկեր 5-ում:

Ինչպես տեսնում ենք, գուտ անավարտ առևտրի ցուցանիշը դիտարկված 7 եռամսյակների ընթացքում դրսևորել է պարբերաշրջանային զարգացում, ինչը ենթադրելի էր, քանի որ անավարտ առևտրի ծավալները պայմանավորող՝ տրված ընթացիկ կանխավճարների ցուցանիշը նույնպես ուներ պարբերաշրջանային զարգացում: Պետք է արձանագրել, որ վերջին եռամսյակում բավական շեղված ցուցանիշը շարքից մաքրելու պարագայում գուտ անավարտ առևտրի ցուցանիշի միտումը կլինի գրեթե զրոյական թեքությամբ ուղիղ, ինչն այլ հավասար պայմաններում վկայում է ընտրանքի կազմակերպությունների շրջանառության ծավալների՝ երկարաժամկետում անփոփոխ մնալու ռիսկի մասին: Սա, բնականաբար, այնքան էլ դրական երևույթ չէ, քանի որ շրջանառության ծավալների ավելացման դեպքում միայն կարելի է ապահովել համակարգի զարգացում: Սակայն, առավել մտահոգիչ է 2020 թվականի մարտի վերջին ձևավորված իրավիճակը, երբ անավարտ առևտուրը ձևավորող դեբիտորական պարտքերը շուրջ 64 մլրդ դրամով գերազանցեցին կրեդիտորական պարտավորությունները: Սա կազմակերպությունների բացարձակ իրացվելիությանը

սպառնացող երևույթ է, քանի որ չհավաքագրված դեբիտորական պարտավորությունների առկայությունը ենթադրում է դրամական միջոցների որոշակի ծավալի սառեցում, այնինչ այդ միջոցները կարող էին օգտագործվել հենց կրեդիտորական պարտավորությունների մարման նպատակով: Այս խնդրի առկայությունն է, որ հանգեցնում է կրեդիտորական պարտավորությունների շարունակական ավելացման, թեև դեբիտորական պարտավորությունները փոփոխվում են պարբերաշրջանային կերպով:

Ամփոփելով կատարված վերլուծությունը՝ կարող ենք արձանագրել, որ, համակարգային առումով, ՀՀ խոշոր ու միջին ոչ ֆինանսական առևտրային կազմակերպությունների կողմից պարտավորությունները կառավարվում են ոչ ամենաարդյունավետ կերպով: Սակայն, ակնհայտ է, որ համակարգում արդեն իսկ ձևավորվել են հստակ միտումներ և որոշակի կայունություն (իհարկե, սա դեռ չի վկայում հավասարակշռության կամ արդյունավետության մասին):

Ելնելով համակարգում ձևավորված ընդհանուր պատկերից՝ կարելի է ենթադրել, որ ՀՀ-ում գործարարությամբ զբաղվողների համար բիզնես միջավայրն այնքան էլ բարենպաստ չէ, քանի որ պարտավորությունների կառավարման առկա վիճակը թույլ չի տալիս կազմակերպություններին արդյունավետ կերպով կառավարել իրենց իրացվելիությունը: Այս տեսանկյունից, շուկայում ձևավորված իրավի-

ճակի բացասական ազդեցությունը կազմակերպության վրա անխուսափելի է, քանի որ համակարգում դեբիտորական և կրեդիտորական պարտավորությունների արդյունավետ մարման խնդիրներն ունեն շղթայական բնույթ և ազդում են շուկայի բոլոր մասնակիցների վրա:

Նման դեպքում, երբ շուկայում պարտավորությունների կառավարումն աչքի է ընկնում ոչ այնքան բարձր արդյունավետությամբ, կազմակերպություններում առաջանում է արտաքին միջավայրի բացասական ազդեցությունը նվազագույնի հասցնելու խնդիր, որի լուծումը պետք է միտված լինի դեբիտորական պարտավորությունների հավաքագրման ժամկետների կրճատմանը, իսկ կրեդիտորական պարտավորությունների դեպքում՝ երկարաձգմանը: Արդեն իսկ հնարավոր բացասական ազդեցությունը կարող է չեզոքացվել կազմակերպությունների կողմից այնպիսի գործիքների ակտիվ կիրառմամբ, ինչպիսիք են.

1. Մաքակարարումների կազմակերպման ճապոնական մոդել

Երբ կազմակերպությունը մատակարարումներ է ստանում առավելագույն թվով մատակարարներից՝ պահպանելով որակի ապահովման նվազագույն ռիսկը, ապա, շնորհիվ մեծ թվով մատակարարների, կրեդիտորական պարտավորությունները մարելու գործընթացում ձեռք է բերում մանկրելու առավել լայն հնարավորություններ:

2. Վաճառքների «ձագար»

Հնարավոր և առկա գնորդների ճիշտ

«գտման» արդյունքում կազմակերպությունը պահպանում և ստեղծում է հարաբերություններ միայն այն գնորդների հետ, որոնց դեպքում դեբիտորական պարտքերի մարումը խնդիրներ չի առաջացնի (այս դեպքում որպես «ձագարով գտման» գործոն է հանդես գալիս սպառողների վճարունակությունը):

3. Գործընկերների հեղ պայմանագրային հարաբերությունների հաստատում

Ինչպես ձեռքբերումների, այնպես էլ վաճառքների դեպքում վճարումները հստակորեն կարգավորվում են պայմանագրային հարաբերություններով, ինչը հնարավորություն է տալիս իրականացնելու կազմակերպության դրամական միջոցների՝ առավելագույն ճշտությամբ բյուջետավորում:

4. Կանխավճարների համակարգից հրաժարում

Կազմակերպությունը փորձում է նվազագույնի հասցնել ինչպես տրված, այնպես էլ ստացված կանխավճարների ծավալները՝ այս կերպ կանխավճարայինից անցում կատարելով հետվճարային համակարգի:

Բնականաբար, պարտավորությունների արդյունավետ կառավարում ապահովող գործիքները չեն սահմանափակվում վերոնշյալներով, սակայն վերջիններս կարող են օգնել ՀՀ-ում գործող կազմակերպություններին բարձրացնել բիզնեսի իրացվելիությունը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Սուվարյան Յու. Մ. և ուրիշներ, Մենեջմենթ, Եր., 2016, էջ 76-77:
2. Կազմակերպությունների հաշվարկների վիճակը 2019 թվականի հունիսի վերջին, https://armstat.am/file/article/sv_08_19a_127.pdf
3. Կազմակերպությունների հաշվարկների վիճակը 2019 թվականի սեպտեմբերի վերջին, https://armstat.am/file/article/sv_11_19a_127.pdf
4. Կազմակերպությունների հաշվարկների վիճակը 2019 թվականի վերջին, https://armstat.am/file/article/sv_02_20a_127.pdf
5. Կազմակերպությունների հաշվարկների վիճակը 2020 թվականի մարտի վերջին, https://armstat.am/file/article/sv_05_20a_127.pdf
6. Կազմակերպությունների հաշվարկների վիճակը 2020 թվականի հունիսի վերջին, https://armstat.am/file/article/sv_08_20a_127.pdf
7. Կազմակերպությունների հաշվարկների վիճակը 2020 թվականի սեպտեմբերի վերջին, https://armstat.am/file/article/sv_11_20a_127.pdf
8. Կազմակերպությունների հաշվարկների վիճակը 2020 թվականի վերջին, https://armstat.am/file/article/sv_06_21a_127.pdf
9. Կազմակերպությունների հաշվարկների վիճակը 2021 թվականի մարտի վերջին, https://armstat.am/file/article/sv_05_21a_127.pdf

Gagik BADADYAN*Аспирант кафедры управления, АГЭУ*

ФИНАНСОВАЯ СИСТЕМА

**ОСОБЕННОСТИ УПРАВЛЕНИЯ ЗАДОЛЖЕННОСТЯМИ ОРГАНИЗАЦИЯМИ
ДЕЙСТВУЮЩИМИ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ**

Необходимость эффективного управления оборотным капиталом - это факт. Управление оборотным капиталом начинается с управления денежными средствами, которое во многом зависит от остатков, структуры, потоков и динамики дебиторской и кредиторской задолженности. Армянские организации не исключение и всегда необходимо оценивать, насколько эффективна система управления этими двумя компонентами на армянском рынке и каковы основные характеристики этой системы. Для решения данной проблемы в статье анализируется дебиторская и кредиторская задолженность крупных и средних нефинансовых коммерческих организаций, действующих в Республике Армения. Посредством анализа представлены основные характеристики области, относящиеся к теме.

Ключевые слова: *дебиторская задолженность, кредиторская задолженность, оборотный капитал, бизнес*

Գագիկ ԲԱԴԱԴՅԱՆ*PhD Student at the Chair of Management, ASUE*

FINANCIAL SYSTEM

**PECULIARITIES OF MANAGEMENT OF ACCOUNTS BY ORGANIZATIONS OPERATING
IN THE REPUBLIC OF ARMENIA**

The need for effectiveness of working capital management is a long-standing fact. Working capital management starts with cash management, which largely depends on the residuals, structure, flows and dynamics of receivables and payables. Armenian organizations are not an exception: there is always a need to assess how effective the management system of these two components is in the Armenian market, and what the main features of that system are. To solve this problem, the article analyzes the receivables and payables of large and medium-sized non-financial commercial organizations operating in the Republic of Armenia. Through the analysis the main features of the field related to the topic are presented.

Keywords: *receivables, payables, working capital, business*